

Պահպանվող գոտու տարածքով որոշակի բույսերի, բուսական ծագման արտադրանքի, կամ այլ օբյեկտների տեղափոխմանը վերաբերող և պահպանվող նմանատիպ գոտու շրջանակում առաջացող ու տեղափոխվող այդպիսի բույսերի, բուսատեսակների կամ այլ օբյեկտների տեղափոխմանը վերաբերող կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի 1993 թվականի հունիսի 24-ի 93/51/ԵՏՀ հրահանգ

Պաշտոնական տեղեկագիր, L 205, 17. 08.1993թ., էջ 0024 – 0025

Ֆիններեն հատուկ հրատարակություն. Գլուխ 3, հատոր 51, էջ 0186

Շվեդերեն հատուկ հրատարակություն. Գլուխ 3, հատոր 51, էջ 0186

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով 93/19/ԵՏՀ հրահանգով¹ վերջին անգամ փոփոխված՝ բույսերի կամ բուսական ծագման արտադրանքի համար վնասակար օրգանիզմների ներմուծումը Համայնք և Համայնքում դրանց տարածումը կանխող պաշտպանիչ միջոցների մասին Խորհրդի՝ 1976 թվականի դեկտեմբերի 21-ի 77/93/ԵՏՀ հրահանգը² և, մասնավորապես, 6 (7) հոդվածի առաջին և երկրորդ պարբերությունները,

քանի որ Համայնքի՝ բույսերի առողջության պահպանման համակարգի կիրառումը Համայնքում՝ որպես ներքին սահմաններից զուրկ տարածքում, պահանջում է որոշակի բույսերի, բուսական ծագմամբ արտադրատեսակների կամ այլ պարագաների համար ստեղծված պահպանվող այն գոտիների ճանաչումը, որոնք սահմանվել են մեկ կամ մի քանի վնասակար օրգանիզմներից պաշտպանության նպատակով,

¹ ՊՏ թիվ L 96, 22.04.1993թ., էջ 33:

² ՊՏ թիվ L 26, 31.01.1977թ., էջ 20:

քանի որ 1993 թվականի հունիսի 1-ից ուժի մեջ մտած 77/93/ ԵՏՀ Հրահանգի դրույթների համաձայն, Ա մասի II հատվածի V հավելվածում թվարկված բույսերը, բուսական ծագմամբ արտադրատեսակները կամ այլ պարագաներ չեն կարող ընդգրկվել հատուկ պահպանվող գոտում կամ տեղափոխության ենթարկվել դրա շրջանակում, եթե տվյալ գոտու համար վավերական և սույն Հրահանգի 10 (1) հոդվածի համաձայն պաշտոնապես տրված բուսասանիտարական անձնագիրը կցված չէ այդ բույսերին, բուսական ծագմամբ արտադրատեսակներին կամ մյուս պարագաներին, վերջիններիս փաթեթավորմանը կամ դրանք տեղափոխող փոխադրամիջոցներին, սակայն, սույն դրույթները, միևնույն ժամանակ, չեն կիրառվում, եթե ապահովվում են որոշակի երաշխիքներ մեկ կամ մի քանի վնասակար օրգանիզմներից պաշտպանվող բույսերի, բուսական ծագմամբ արտադրատեսակների կամ պարագաների համար սահմանված պահպանվող գոտում և, քանի որ այս դրույթները կարող են բավարարվել առավել մեղմ պայմաններով՝ ի համեմատություն նմանօրինակ պահպանվող գոտում առաջացող և տեղափոխության ենթարկվող բույսերի, բուսական ծագմամբ արտադրատեսակների կամ այլ պարագաների մասով գործող տվյալ Հրահանգի 6 (4) հոդվածով սահմանված դրույթների,

քանի որ համընդհանուր ճանաչում գտած երաշխիքների բացակայության պայմաններում անհրաժեշտ է սահմանել նման երաշխիքներ բույսերի առողջության համապատասխան պաշտպանությունն ապահովելու ակնկալիքով՝ ելնելով այն հատուկ պայմաններից, որոնց ներքո իրականացվում են տվյալ տեղափոխությունները,

քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են Բույսերի առողջության հարցերով մշտական կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Անդամ պետություններն ապահովում են, որ բավարարվեն 2-րդ պարբերությամբ սահմանված պայմանները 77/93/ԵՏՀ հրահանգի 2 (1) (ը) հոդվածի համաձայն մեկ կամ մի քանի վնասակար օրգանիզմներից պաշտպանության նպատակով բույսերի, բուսական ծագմամբ

արտադրատեսակների կամ պարագաների համար ստեղծված պահպանվող գոտուց դուրս առաջացող 77/93/ԵՏՀ հրահանգի Ա մասի II հատվածի V հավելվածում թվարկված բույսերի, բուսական ծագմամբ արտադրատեսակների կամ այլ պարագաների՝ նմանօրինակ գոտուց դուրս գտնվող վերջնական նպատակակետ տեղափոխության ժամանակ՝ առանց տվյալ գոտու համար վավերական բուսասանիտարական անձնագրի:

2. Անհրաժեշտ է բավարարել հետևյալ պայմանները՝

ա) փաթեթվածքը կամ, հարկ եղած դեպքում, առաջին պարբերության մեջ նշված բույսերի, բուսական ծագմամբ արտադրատեսակների կամ պարագաների տեղափոխումն ապահովող փոխադրամիջոցները պետք է մաքուր և զերծ լինեն առաջին պարբերության մեջ նշված օրգանիզմներից և պետք է ապահովեն, որ վնասակար օրգանիզմների տարածման վտանգ չլինի,

բ) փաթեթավորումից անմիջապես հետո, փաթեթվածքը կամ, հարկ եղած դեպքում, նշված բույսերի, բուսական ծագմամբ արտադրատեսակների կամ պարագաների տեղափոխումն ապահովող փոխադրամիջոցները պետք է մանրէազերծվեն բուսասանիտարական խիստ նորմերին համապատասխան՝ ապահովելու, որ չկա վնասակար օրգանիզմների տարածման վտանգ տվյալ պահպանվող գոտում և փոխադրամիջոցի տեխնիկական վիճակը կպահպանվի անփոփոխ և 77/93/ԵՏՀ հրահանգում նշված պատասխանատու պաշտոնական մարմինների պահանջներին համապատասխան, տվյալ պահպանվող գոտուց տեղափոխման ընթացքում կպահպանվի մանրէազերծված վիճակում,

գ) առաջին պարբերությամբ նշված բույսերին, բուսական ծագմամբ արտադրատեսակներին կամ պարագաներին կցվում է սովորաբար առևտրական նպատակներով օգտագործվող փաստաթուղթ, որը պարունակում է նշում այն մասին, որ այդ արտադրատեսակներն առաջացել են տվյալ պահպանվող գոտուց դուրս, և դրանց համար տվյալ պահպանվող գոտուց դուրս գտնվող նպատակակետ է սահմանված:

3. Եթե 77/93/ԵՏՀ հրահանգի 11 (7) հոդվածի համաձայն կազմակերպված և համապատասխան գոտու տարածքում անցկացվող պաշտոնական ստուգման ժամանակ պարզվում է, որ 1 (2) հոդվածով սահմանված պահանջները

բավարարված չեն, ըստ անհրաժեշտության, անհապաղ ձեռնարկվում են պաշտոնական ներքոհիշյալ միջոցները՝ չհակասելով ձեռնարկվելիք միջոցներին, եթե պարզվել է, որ բույսերը, բուսական ծագմամբ արտադրատեսակները կամ պարագաները չեն բավարարում 77/93/ԵՏՀ հրահանգով սահմանված պայմանները.

- կնքել փաթեթվածքը,

- ապահովել բույսերի, բուսական ծագմամբ արտադրատեսակների կամ պարագաների պաշտոնապես վերահսկվող տեղափոխումը տվյալ պահպանվող գոտուց դուրս գտնվող նպատակակետ:

Հոդված 2

1. Անդամ պետությունները սահմանում են, որ անհրաժեշտ է կիրառել առավել մեղմ պայմաններ՝ 77/93/ ԵՏՀ հրահանգի դրույթների համաձայն, Ա մասի II հատվածի V հավելվածում թվարկված այն բույսերի, բուսական ծագմամբ արտադրատեսակների կամ պարագաների նկատմամբ, որոնք առաջանում և տեղափոխության են ենթարկվում մեկ կամ մի քանի վնասակար օրգանիզմներից պաշտպանվող բույսերի, բուսական ծագմամբ արտադրատեսակների կամ պարագաների համար սահմանված պահպանվող գոտում:

2. 1-ին պարբերության նպատակով կիրառվում է ներքոհիշյալ առավել մեղմ պայմանը.

տվյալ Հրահանգի 6 (4) հոդվածում նշված պաշտոնական ստուգումները կարող են ապահովվել Հանձնաժողովի 1992 թվականի հուլիսի 30-ի 92/70/ԵՏՀ հրահանգով Համայնքում պահպանվող գոտիների ճանաչման նպատակով կատարվող ուսումնասիրությունների մանրամասն կանոններով սահմանված պայմանների բավարարմամբ³:

Հոդված 3

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելուն ուղղված անհրաժեշտ օրենքները,

³ ՊՏ թիվ L 250, 29.08.1992թ., էջ 37:

կանոնակարգերը կամ վարչական ակտերը Խորհրդի 91/683/ԵՏ⁴ հրահանգի 3 (1) հոդվածում նշված ամսաթվին: Նրանք դրա մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին

Անդամ պետությունները, այդ դրույթներն ընդունելիս, պետք է ապահովեն, որ դրանք հղում պարունակեն սույն Հրահանգին կամ իրենց պաշտոնական հրապարակման պահին ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ներպետական իրավունքի բոլոր այն դրույթները, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում: Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին:

Հոդված 4

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1993 թվականի հունիսի 24-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Ռենե Ստեյխեն

Հանձնաժողովի անդամ

⁴ 4) ՊՏ թիվ L 376, 31.12.1991թ., էջ. 29: